Թիւ. 61.



# ԴԻՏԱԿ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ

## ՚Ի ԽՆԴԻՐՈՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՑ

1813.

10. 11. 12. ՕԳՈՍՏՈՍ:

### ՏԱՆԻՄԱՐԳԱ.

Քօբէնհայկ. 21 Յունիս:

Քօբէնհայկի գազէթային մէջ կսէ. Թէ. մէկ թուղթմը որ հրատարակեց Շվէտի Ճէնէրալը և տպվեցաւ նաև Ռօսթօքի գազէթային մէջ, շատ բաներ պատմելէն ետև, կըպատմէ աս հետևեալ խապարնալ Թէ,, երբոր հասաւ Քասանախագահ իշխանը Տանիմարգային Համպուրկ. ու տեսնըվեցաւ Ֆրանսըզի Ճէնէրալին հետընէ, ծածուկ մէկզմէկու մէջ ըրին մէկ դաշնագրութիւնը, որուն զօրութ Տանիմարգացիք միացած Ֆրանսըզին զօրացը հետ՝ պիտոր զապթ ընէին Ալմօռակը. և հետևաբար Շվէտին զօրքը որ մնացեր էր հոնանը մինակ՝ պէտք էր որ ետ քաշվէր ":

Անկից զատ նոյն թուղթին մէջ կըսէ նաև աս բանալ Թէ ,, երբոր աս իշխանը կըխօսէր Ֆրանսըզի Ճէնէրալին հետնէ դաշնագրութեան վրայ, խապար խրկեցնաև Մոսկովի Ճէնէրալին՝ որուն անունը էր Թէտտէնպօռն, ու Շվէտի Ճէնէրալին, Թէ Տանիմարգայի Թագաւորը պատրաստ է 25 հազար զօրքով զօրացընել Շվէտին բանակը որ Ֆէռնոււ ըլլայ էսէրէն Է-հանուր խաղաղութէ, ու նոր Նապօլէօնին հպարտութիւնը: (Օրագր. Փուբլ.)

Դլէբթունօ ըսված նաւը մտաւ Քօբէնհայկ իրեն ճամբու պաշար պատրաստելու համ. աս նաւապետը պատմեց Թէ Մայիսի 11 ին, երկու օրառաջ իրեն Ամերիգացէ ճամբայ ելլալէն, Ամերիգացիք ըրերին մէկ կաշտարեալ յաղթութիւնը Հինտստանցինե-րուն դէմ. ու բոլոր Քանատան գրաւեր պահ ըրերին:

Բիէթռօպօլսկի գազէթային մէջ կըսէ Թէ Մայիսի 13 ին փառաւոր հանդէս ըրեցին հոն յաղթութեան համար՝ որ ըրաւ Մոսկովին ու Պռուսին զօրքը Ֆրանսըզի զօրացը դէմ՝ որուն կառավարը էր Նաբօլէօն կայսրը: (Օրագր. Կայսեր:)

Ճանապարհորդները որ գացին Տանիմար-

մարգայի երկրէն խուժեցին, հրաման կըրցան առնել ներս մըտնալու, բայց նաւերը իրենց ամէն Թախըմով ճամբայ դըրին ետ խրկեցին: Մէկ քանի ճանապարհորդներու պատմածին կէօրէ, ամսուս 19էն մինչեւ 20ը հրամանը հըրատարակւերէ խուժեցիային մէջ, որ ասկից ետեւ ամէնեւին Թող չըտան որ մէկ օտարականը մտնայ աս տէրութեան մէջ, եւ գըտնըւածներն ալ զօռով դուրս հանեն: Երբոր ամսուս 20ին հասան Մաւմօէ մէկ քանի ճանապարհորդ ու մէկ քանի Տանիմարգացի, բռնեցին ու շատ զգուշութ̅ք պահեցին, մինչեւ որ նաւ գըտնըւի՝ նորէն զանոնք Տանիմարգայ խրկելու համար: (Գալէն · Փրանս:)

## ԲՐՈՒՍՍԻԱ·

Պէռլին · 28 Յունիսի:

Փէլտ Մարէշալ Բրինչերէ Քուէթուսվլին մարմինը հասաւ Լիկա, եւ քաղաքը մտնալու ատեն շատ Թօփեր նետեցին, ու չալեցին բոլոր քաղքի զանգակները. որչափ զօրք կար նէ քաղաքը՝ սելահլընմըշ եղան; նմանապէս քաղաքի պահապան գունդն ալ, եւ այսպէս ը̅ առաջ գացին մեռելին:

## ՍԼԵԶԻԱ·

Զուլթհաու · 21 Յունիսի:

Ամսուս 20ին հասած եկած Թուղթերը կըպատմեն, Թէ 100 խաղախ՝ որ կըկենային Քօթպուս, պարտաւորեցան յանձնելու ան տեղը՝ Փրանսըզի մէկ պզտիկ խումբին. աս պատճառաւ շուտով մէնզիլներ խրկըւեցաւ ան պաշտօնատարներուն՝ որ որոշւած էին երկու կողմէն հոգ տանելու համար զինադադարման վ̅ր. հարցունելու համար, Թէ դաշնագրութեան կէօրէ ան տեղը Փրանսըզին ձեռքը պիտոր յանձնըւի՝ Թէ չէ Մոսկովներուն ձեռքը պիտոր մնայ:

## ՊԱՎԻԵՐԱ·

Աուկսպուրկ · 4 Յուլիսի:

Յունիսի 30ին գիշերը եղաւ մէկ սաստիկ մըրրիկմը, ու շատ վնաս տըւաւ Մօնաքօին ու անոր շըջանակներուն մէջ. շատ տուներուն վրայի ծածկը, տանիքը վերցուց ու տարաւ. գրեթէ բոլոր տուներու պատուհաններուն ճամերը ինկան ջարդ բուրդ եղան. շատ ծառաստաններ գլխիվար դարձան, որով սաստիկ վիրաւորւեցան մէկ քանի անձինք. շատ չատըռներ Նիմֆէմպուրկին չըրջանակները կեցած բանակին՝ հաւան եղան ու կործանեցան. աս մըրրիկին հետ կար մէկ սաստիկ երկինք գոռալմընալ: Թիւռօլին լեռները բոլոր նորէն գոցւեցան ձիւնով:

Աս տէրութեան մէջ կըշարունակւի կոր դեռ զօրք ժողվելը, եւ քիչ ժամանակւան մէջ ոտք պիտոր ելլայ 66 պատդալիօն հետեւակ զօրք. իսկ ձիաւորը, Թօփճիները աւոր համեմատութ̅ք պիտոր շատցըւի:

Քօնթէ փօլօմպրանօ՝ որ էր Նափօլիի Թագաւորին դեսպանը Էսլէն աս տէրութեան մէջ, մեռաւ Մօնաքօին մէջ՝ շատ երկայն հիւանդութեան քաշելէն ետեւ:

Թագաւորը հրամայեց իրեն պալատականներուն, որ սուգ մնան 8ը օր Աւկուսթօ Ֆէրտինանտօ Բրուսսիայի Բրինչիբէին մահուանը համար: (Օրագր · Կայսեր:)

## ՏԵՐՈՒԹԻՒՆ

Վիւրդէմպէրկի ·

Ստօւդկարտ · 30 Յունիսի:

Էլզասիայի մօտիկ եղած բանակէն եկաւ աս հետեւեալ խապարը:

Նօռման զօրապետը որ էր Վիւրդէմպէրկի ձիաւորներուն ճէնէրալը. ամսուս 17ին Բատըլայի Տուքային հրամանաւ գնաց ան Պռուշի գունդին դէմ՝ որնոր ճէնէրալէն Սաալէէն կէրթարկոր Մուլոնային վրայ. աս ճէնէրալը ունէր իրեն հետ 2 հարիւր ձիաւոր ու այնչափմընալ հետեւակ՝ հանդերձ 2 կտոր Թօփով: Փօռնիէռ գըլխաւոր ճէնէրալը աս գունդին ունէր 2 հարիւր վիշապ ըսւած Փրանսըզի ձիաւոր, եւ մէկ պատդալիօնմընալ եռէկ հետեւակ զօրք:

Աս գիշերւան մէջ Պռուշին գունդը կըկենար Քիրզայլէն գեղը որ է Լօւգձէնի մօտիկ: Հրաման եկաւ ճէնէրալ Նօռմանին որ աս գեղը առնու Թշնամիներուն ձեռքէն. գնաց աս ճէնէրալը հան ու տեսաւ որ Պռուշին զօրքը ճակատեր էր տունե-

ներուն առջևը Լիբսիայի Ճամբուն վրայ, և ասոնց բոլոր զօրութիւնը կըբաղկանար 6 հազար հոգիէ: Այս Պռուսիան զօրաց գլխաւոր հրամայօղը՝ որուն անունը էր Լութցով գնաց Փօռնիէռ ֆրանսըզի Ճէնէրալին առջև՝ խօսելու համար մէկ բանիմը վրայ, և քիչ ժամանակէն նորէն ետ դարձաւ: Նօրման Ճէնէրալը առաւ Պռուսիան զօրացը ետևէն, ու առաջարկեց որ անձնատուր ըլլան իրեն. ան գիշեր այնպէս մութ էր որ հիչ բանմը չէր տեսնըվէր. ֆրանսըզները կամաց կամաց կըմօտենային Պռուսիաներուն՝ որոնք առջի բերանը նետեցին մէկ Թօփմը ասոնց վրայ, և կըջանային միշտ հեռանալ ֆրանսըզներուն գունդէն: Պռուսիաները հասան մէկ գեղմը ու հոնտեղը ինչպէս որ պէտք էրնէ կարգաւորվեցան, և անկից ետև սկսան սպառնալ զարնըվելու համար Վիւթէմպէռկի ձիաւորներուն գունդին ձախ թևին հետ. անատենը Նօրման Ճէնէրալը առաջ քշեց վիշապ ձիաւորները՝ պաշտպանելու համար իրեն մօտիկ գունդերը: Պռուսիաները անդադար կըրակ կընէին ֆրանսըզներուն վը. ֆրանսըզները նորէն առաջարկեցին որ անձնատուր ըլլան, բայց երբոր նորէն չէ ըսիննէ, անատենը Վալլէրսթէյին Բրինչիբէն կըրակ ընելով սըրսըրտեցաւ մէկ փոսիմը քէնարէն, հասաւ Թշնամիներուն, ու ասդին անդին ցրուեց բոլոր գունդը, 10 օֆֆիչիալ, 100 զինուոր ու 65 ձի գերի բռնեց: Թշնամին՝ գիշերը իրեն օգնական գըտնալով փախաւ յաջողութեամբ. Փօռնիէռ Ճէնէրալը հրամայեց իրեն գունդին որ գիշերը անցընեն Քնաութնաուէնտօրֆ գեղէն դուրս: Պռուսիաներէն շատը վար ինջերէին իրենց ձիերէն, անոր համար ամմէնքնալ բռնըվեցան հետևեալ օրը: 160 Պռուսս միայն կրցան անցնիլ Էլպթէրին անդին կողմը: Նօրման Ճէնէրալը առաջ քշեց իրեն զօրքը Հալլային, Տէսսաուին ու Տօւպէրին կողմէն, բանակեցաւ աս տեղերը մինչև ամսուս 22ը, և անկից ետև դարձաւ նորէն Լիբսիա:

(Գազէթ. Ֆրան:)

## ՆԵՄՑԵՍՏԱՆ.

Վիեննա. 7 Յուլիսի:

Նէմցէի կայսրուհին կըկենայ հիմայ Լաասէնպուրկին պալատը, և երբեմն Վիեննա կուգայ՝ մէկ քանի սահաթմը հոնտեղը անցընելու համար. Բրինչիբէ Ֆէրտինանտօնալ Կայսրուհիին հետնէ, հետնէն նաև արքիտուքայները և արքիտուքէսսաները. Բրինչիբէ Քառլօն կըկենայ իրեն ամառվան պալատը՝ որ է քաղքի արուարձանին Վիէդէն մէջ: Բրինչիբէ Ճիօվաննին կըկենայ Մօէռպէռկ՝ իրեն կալուածները: Արշիտուքաները Անդօնիօ, Լուիճի, ու Ռօտոլֆօ կըկենան Պատէն, Արքիտուքայ Ռանիէրին կըկենայ Ճէրստօրֆ իրեն գեղերը՝ որ է արևմտեան կողմը Նէուշթատին: Արքիտուքէսսա Պէաթրիչէ մայրը հիմակվան Նէմցէի Կայսրուհիին՝ Բրինչիբէ Մասսիմիլիանօ իրեն տղուն հետ Պըրուն գնաց, բայց քիչ ժամանակէն նորէն Վիեննա կըդառնայ:

Կռաձին գազէթան կըպատմէ աս հետևեալ խապարը:

Յունիսի 22ին Բրինչիբէ Քառլօն ու Բրինչիբէ Ճիօվաննին Նէմցէի կայսեր եղբայրները, մէկքանի ընկերով նորէն աչքէ անցուցին մեր լեռներուն վրայի բնակիչները. անկից ետև գնացին Ռէիբէհէնաու՝ և հոնտեղը անցուցին գիշերը. հետևեալ առաւօտը որ էր 23 յունիսի, գացին աչքէ անցընելու համար ան լեռներնալ՝ որ կըկոչվէին Սքհնէ-Ալբէ, ուր տեղ կեցան նաև գիշերը: 24ին կէսօրէն առաջ գացին Նէուպուռկ՝ շատ ընկերակցութեամբ քաղքին իշխանաւոր անձանց: Աս Բրինչիբէները ուսկից որ պիտոր անցնէիննէ բոլոր ժողովուրդը դիզվէրէր ան Ճամբուն վրայ, որ երբոր կանցնէիննէ՝ ամմէնքը մէկ բերան կէցցէ կըկանչէին: Կուզէին երթալ աչքէ անցընել նաև ան լեռնային տեղուհանքնալ՝ ուր տեղ կանուանէր մեռած կընիկ, բայց հաւաներուն սաստիկ գէշութիւնը թող չտըվաւ: Ամսուս 25ին առաւօտը եկան Թէռնպէռկ:

(Օբսէր. Կայսէր:)

Ամմէնքը կըսպասէին որ տէրութիւնը աճեցընէ ան տուրքը՝ որ դրված էր կերակրեղէնաց բաներուն վրայ, բայց ասոր ներհակ փոխանակ վեր վերցընելու, ինչեցուցին բոլոր տուրքերը առաջին հարկաւոր բաներուն, ծ հացի, ալիւրի, միսի և ն և:

(Գազէթ. Ֆրան:)

# ՖՐԱՆՍԱ·

### Փէօրէնցա· 16 Յուլիսի:

Ամսուս 15ին առաւօտը, աս քաղքի հրապարակին մէջ. Քաւլօ Պէռթօնի պատանիին վրայ կտրըված վճիռը 'ի գործ դրըվեցաւ, բոլոր քաղքի ժողովրդեան առջևը: Աս պատանիին յանցանքը էր հայրասպանութիւն՝ որ ըրեր էր Նոյեմբերի 25ին 1812: Պատանին առջի բերանը կուրանար իրեն ըրած յանցանքը, բայց շատ ու ճիշտ քըննութիւններ ընելէն ետև դատաւորանքը կըտրըվեցաւ ու դատապարտվեցաւ մեռնելու, գլուխը կտրելով. ձեռվըները կըտրելով ու ուրիշ չարչարանքներ տալով՝ ինչպէս որ կըհրամայէ հիմակվան Նոր օրէնքը այսպիսի մահապարտներու համար: Աս պատանին իմանալէն ետև իրեն դատապարտութեան վճիռը, կէնէ ոտք կըկոխէր ու չէր խոստըվաներ իրեն յանցանքը. անոր համար դատաստանին մէջ երբոր կըխօսէին փաստաբանները, փաստաբանին մէկը՝ որ կըհաստատէր պատանիին դատպարտութիւնը բոլոր ժողովրդեան առջև, իրեն ատենաբանութիւնը լըմնցուց աս հետևեալ վերջաբանութեամբ՝ դառնալով դէպ 'ի մահապարտը:

„Պատիժը՝ որ վճռեց քու վրադ արդարութեան ատեանը, որչափ ծանր ալ որ ըլլայ, չհամեմատիր քուկին ըրած անօրէնութեանդ, և թէ որ բաւական ալ ըլլայ աս մարդկային վրէժխնդրութեան պատիժը՝ քաւել քուկին ըրած յանցանքդ մարդկան առջև, գիտցիր որ չկրնար ամենևին արդարացընել զքեզ Աստուծոյն անսխալ դատաստանին դիմացը՝ մինչև որ դու քեզի չդառնաս ու չխոստովանիս կատարեալ զղջումովը. դու կրնաս ուրանալ մարդկան առջև առանց մէկ պատժի. բայց երբոր ներկայանաս այն անաչառ դատաստանին, գիտցիր որ կըմընաս յաւիտեանս յաւիտենից առանց թողութեան....: Քուկին օրինակդ վախցընէ զամէնքը, որ ասկից ետև վերջինը ըլլայ հայրենի արեան թափվիլը անօրէն անզգամ հայրասպան որդւոյմը ձեռքէ":

Պատանին բողոքեց տահա մեծ ատեանին, անոր համար հոն ալ աղէկ քննութիւն ըլլալէն ետև աս բանիս վրայ, հաստատեցին հոսալ նորէն դատապարտութեան վճիռը: Պատանին երբոր տեսաւ որ ալ ճար չկայ ազատվելու, ու Այ շնորհքը վրան գալով, խոստըվանեցաւ ատեանին առջևը իրեն ըրած յանցանքը, անոր հմէր քիչմը ժամանակ տըվին ասոր որ աղէկմը պատրաստվի քրիստոնէական սովորութեանը կէօրէ, և երբոր որոշեալ օրը հասաւ նէ, 'ի գործ դրվեցաւ վճիռը, որով և քաւեց Ծընին առջևը իրեն ըրած զարհուրելի յանցանքը: (Օւ. Ա.)

# ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

## Կրկին Սիկիլեայ·

### Նաբօլի· 12 Յուլիսի:

Ամսուս 7ին ու 8ին այրեցին հրապարակաւ ան Ինկիլիզին ապրանքները որոնք բռնըվեցան Ճամբուն մէջ, ու պահված էր Նաբօլիի Մաքսի մաղազաներուն մէջ:

7ին այրած ապրանքները:

Կտաւ նինուէի մուսուլ ալճէ 2465 Թօփ. Իռլանտայի կտաւ 88 Թօփ. Թաշկինակ նինուէի 1812 տուզինայ. Ինկիլիզի չուխայ 70 Թօփ. 400 Թօփ տպած կտաւ, բամպակէ չորապ, մանած բամբակ. պղինձէ շղթայ սահաթի հմէր և տահա ուրիշ բաներ:

8ին այրած ապրանքները:

Մանած բամպակ 122 տէնկ. 145 Թօփ կտաւ. բարակ բամպակէ կտաւ 60 Թօփ. տպած կտաւ բամպակէ 23 Թօփ. բամպակէ խասիֆէ 19ը Թօփ. կըտաւ նինուէի 38 Թօփ. բամպակէ Թաշկինակ 23 Թօփ. բամպակէ ճերմակ մանած մէկ սնտուկ: Արժողէքը աս ապրանքներուն կըհասնի 5 հարիւր հազար ղուշի:

Նաւերը՝ որուն մէջ գըտնըվեցան աս ապրանքները, բռնըվեցան ՌԷՅ ըսված Թագաւորական խուրսանուէն, և բերվեցաւ նաւահանգիստը. Նաւերուն անունը էր Ճիւզօմօ, Քօնքօրտիէ, Տրօֆֆօնտ:

(Մօնիթօռ Կրկին Սիկիլեայ:)

Աս գործքս՝ որ է պատմութիւն հիմակվան ատենիս, տասնըհինգ օրը մէյմը կըտըպվի.
'ԻՎԵՆԵՏԻԿ 'ԻՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ: